



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 16 ՄԱՐՏ, 2020

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լին. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 46

ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԸ ՄԵՋԻ ՀԵՏ Է

Աստուած է մեր ապաւենն ու պօրութիւնը,  
նեղութեանց մէջ շուրով հասնող օգնականը:  
Հերելաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի,  
եւ լեռները իյնան ծովերուն խորը:  
Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն ու փրփրին,  
եւ լեռները դողան անոնց կապաղութենէն:  
Ամենակալ Տէրը մեզի հետ է. մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:  
Եկէք, փետէք Տիրոջ գործերը,  
պարմանահրաշ գործերը՝ որ ան կ'ընէ երկրի վրայ:  
Աշխարհի չորս անկիւններուն՝ պատերազմները կը դադրեցնէ,  
աղեղները կը կտրէ, նիվակները կը փշրէ,  
եւ վահանները կրակով կ'այրէ:  
«Դադրեցուցէք ձեր կռիւները, եւ ճանչցէք թէ ես եմ Աստուածը,  
ես է որ կ'իշխեմ ազգերուն, ես կը տիրեմ աշխարհին»:  
Ամենակալ Տէրը մեզի հետ է.  
մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

29 ԳԼՈՒԽ

## ԵՐԵՄԻԱՅԻՆ ՆԱՄԱԿԸ ԲԱԲԵԼՈՆԻ ՀՐԵԱՆԵՐՈՒՄ (29:1-23)

Այս հատուածը կը վերաբերի առաջին գերի փարուածներուն, որոնք փարուեցան դէպի Բաբելոն: Այո, Տէրը գերի քշեց ժողովուրդը դէպի Բաբելոն, բայց ահա նամակով մը զիրենք կը քաջալերէ, որպէսզի անոնք աճին ու բազմանան, զգուշ ըլլան սուր մարգարէներէն, եւ սպասեն Տիրոջ այն մեծ օրուան երբ զիրենք դարձեալ պիտի բերէ այն երկիրը, եւ այդպիսով Իր բարի խոստումը պիտի կատարէ: Ինչպէս Պօղոս Առաքեալի պարագային, այսպէս էլ, եթէ երբեք անմիջական ներկայութիւնը կարելի չէ մարգարէին, ապա նամակի ճամբով Աստուած Իր պարգաւմները կը փոխանցէ, որպէսզի ժողովուրդը շարունակէ հաւատարիմ մնալ, հակառակ փրորող կացութեան, ու մանաւանդ՝ երբ իրենք գերութեան մէջ են:

Հեղափոխականօրէն, Տէրը ինք կը քաջալերէ, որ գերի գացողները փրօնէն ինքն, պարտեզներ փնտրեն ու անոնց պարուհներէն ուրբեն: Ամուսնան գաւակներ ունենան: Տէրը ինք կը թելադրէ, որովհետեւ անոնց վերադարձը շուրջով փրօնի պիտի չունենան: Որովհետեւ սուր մարգարէներ այնպէս կը ներկայացնէին որպէս թէ շուրջով պիտի վերադառնան: Եթէ շուրջով պիտի վերադառնան, ուրեմն կարիքը չկայ փրօնէն շինելու, պարտեզներ փնտրելու եւ գաւակներ ունենալու: Միւս կողմէ, նաեւ կայ մարդկայն այն փրամադրութիւնը, որ ուրիշի երկիրը ինչու շէնցնել, մանաւանդ՝ գերութեան փարուած: Բայց այս թելադրութիւնը կու գայ ցոյց փալու, թէ անոնք հոն պիտի մնան եօթանասուն փարի, որմէ յետոյ Տէրը Ինք պիտի այցելէ զիրենք վերադարձնելու իրենց երկիրը, ինչպէս որ խոստացած էր: Ուրեմն աղօթեցէք որպէսզի այդ երկրին մէջ խաղաղութիւն ըլլայ, որպէսզի այդ խաղաղութենէն իրենք ալ օգտուին: Անոր համար ալ, ինչպէս Առաքեալը պիտի ըսէ. «*Ամէն բանէ առաջ կը խնդրենք որ աղօթէք, խնդրանք, պաղատանք եւ գոհութիւն յայտնեցէք բոլոր մարդոց համար, մանաւանդ՝ թագաւորներուն եւ իշխանութեան գլուխ եղող բոլոր մարդոց համար, որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կատարեալ աստուածաշարժութեամբ եւ պարկեշտութեամբ. որովհետեւ այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը*» (Ա Տիմ 2:1-3): Իսկ եթէ բռնապէր է, թող Աստուած Ինք փրօնէ անոր դարը արդարօրէն, ինչպէս արդէն պիտի ընէ, Բաբելոնին, որովհետեւ այդպէս ալ խոստացաւ, ըսելով. «*մինչեւ որ անոր ժամանակը գայ*» (Երեմ 28:7): Ահա Աստուծոյ փրօնած խոստումը ինչ որ ծրագրած է: Յաճախ այնպէս կը թուի թէ Տէրը Ինք չարիք է որ կու փայ մարդուն, բայց հակառակը, չարիք կարծուած երեւոյթները խորքին մէջ բարիք են, մանաւանդ՝ Աստուածապաշտ մարդուն համար, որ կը քալէ Աստուծոյ ճամբէն, ու կ'ապրի Անոր կամքին համաձայն: Նոյնը Տէրը Ինք կը խոստանայ ըսելով, ինձի պիտի աղօթէք ու ես պիտի լսեմ (12հմբ):